



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

<b>1. Ընդհանուր դրույթներ</b>
<p><b>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b>          Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) ընթացիկ վերլուծությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.24-Ղ4-2)</p> <p><b>1.2. Ենթակա և հաշվետու է</b>          Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:</p> <p><b>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ</b>          Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:</p> <p><b>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b>          Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Վարչության պետը:</p> <p><b>1.5. Աշխատավայրը</b>          Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միեր Մկրտչյան N 5</p>
<b>2. Պաշտոնի բնութագիր</b>
<p><b>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <p>1. Ապահովում է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական-վերլուծական ամփոփագրերի մշակման աշխատանքները,</p> <p>2. ապահովում է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ձևավորման աշխատանքները,</p> <p>3. ապահովում է ըստ անհրաժեշտության և հնարավորության հարցումների իրականացման և դրանց հիման վրա տեղեկատվության հավաքագրման աշխատանքները,</p> <p>4. ապահովում է տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքները,</p> <p>5. ապահովում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակվող միջազգային ռեյտինգների և ցուցիչների բարելավմանն ուղղված քաղաքականությունների մոնիթորինգի իրականացման աշխատանքները,</p>



6. Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով ապահովում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման աշխատանքները:

**Իրավունքները՝**

- պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական-վերլուծական ամփոփագրերի մշակման աշխատանքների, ինչպես նաև մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ձևավորման համար,
- ստանալ կարծիքներ, առաջարկություններ և համապատասխան տեղեկատվություն,
- Բաժնի աշխատանքների իրականացման համար բաժնի իրավասության մասնագիտական հարցերի շուրջ կազմակերպել հանդիպումներ և քննարկումներ,
- Իրականացնել քաղաքացիների ընդունելություն,
- ընդգրկվել հանձնաժողովների կամ աշխատանքային խմբերի կազմում,
- Բաժնի աշխատանքների իրականացման նպատակով համագործակցել Նախարարության այլ ստորաբաժանումների ստորաբաժանումների հետ:

**Պարտականությունները՝**

- հետևել և հսկել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական-վերլուծական ամփոփագրերի մշակման աշխատանքներին,
- վերլուծել և ստուգել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ճշգրտությունը,
- ուսումնասիրել և հետևել տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ կազմակերպչական աշխատանքներին,
- ուսումնասիրել և հետևել Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակվող միջազգային ռեյտինգների և ցուցիչների բարելավմանն ուղղված քաղաքականությունների մոնիթորինգի իրականացման աշխատանքներին,
- հսկել ըստ անհրաժեշտության և հնարավորության նպատակային հարցումների իրականացման և դրանց հիման վրա տեղեկատվության հավաքագրման աշխատանքները,
- ստուգել Բաժնի կողմից կազմվող ամփոփ զեկույցները և հաշվետվությունները:

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**





Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: